ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N ԱՇՆՈՐՀՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Աղբահանության վճար սահմանել՝ համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 50 /հիսուն/ դրամ:

1.1 Որպես արտոնություն՝ հինգից ավելի անդամ ունեցող ընտանիքների ամսական աղբահանության վճար սահմանել 250 /երկու հարյուր հիսուն/ դրամ:

2. Ամսական աղբահանության վճար սահմանել՝ համայնքում գործող իրավաբանական անձանց համար.

1.1 Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ յուրաքանչյուր քառակուսի մետրի համար 50 դրամ:

1.2 Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ՝ յուրաքանչյուր քառակուսի մետրի համար 20 դրամ:

1.3 Արտադրական, արդյունաբերության և գրասենյակային նշանակության շինություններ՝ յուրաքանչյուր քառակուսի մետրի համար 6 դրամ:

1.4 Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ՝ յուրաքանչյուր քառակուսի մետրի համար 3 դրամ:

3. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար մեկ փաստաթղթի համար սահմանվում է փոխհատուցման վճար՝ 1 000 /մեկ հազար/ դրամ:

4. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 /երեք հազար/ դրամ:

5. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 /երեք հազար/ դրամ:
6. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 /երեք հազար/ դրամ:
7. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 /երեք հազար/ դրամ:
8. Համայնքի կողմից մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 /երեք հազար/ դրամ:
9. Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին /վերնիսաժներին/ մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 /երեք հազար/ դրամ:
10. Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ փոխհատուցման գումարի չափով.

	Անասնաբուժական ծառայության անվանումը	Գինը /դրամ/
1	Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն	0
2	Ծննդօգնություն 1. թեթև միջամտություն 2. ծանր միջամտություն	 1000 2000
3	Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)	Մանր կենդանի 0 Խոշոր կենդանի 0

4	Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար	500
5	Ախտահանություն	1 քառ. մետր 100
6	Միջատազերծում (դեզինսեկցիա)	1 քառ. մետր 100
7	Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից	Յուրաքանչյուր այցելություն 1000
8	Արհեստական սերմնավորում	15000
9	Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից	Մանր կենդանի 1000 Խոշոր կենդանի 2000

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան